



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

# ՀՀ-ՈՒՄ ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ: ՊՐՈԲԼԵՄԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

---

Գնահատման հաշվետվություն

Սույն գնահատման հաշվետվության պատրաստումը իրականացվել է **“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”** ՀԿ-ի կողմից՝ «Մարդու իրավունքների խթանումն անվտանգության ոլորտում» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են **“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”** ՀԿ-ին և հնարավոր է, որ չհամընկնեն Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի տեսակետների հետ:

ISBN 978-92-9235-103-8

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	4
Մեթոդաբանություն .....	4
Պրոբացիոն համակարգի օրենսդրական հիմքերը.....	5
Պրոբացիոն ծառայության հակիրճ նկարագրություն.....	7
Նկատառումներ Հայաստանի Հանրապետությունում ներդրվող պրոբացիոն ծառայության վերաբերյալ.....	9
Օրենսդրական կարգավորումների բացթողումներ .....	9
Միջազգային փորձ.....	11
Պրոբացիոն ծառայության ինստիտուցիոնալ կառուցվածքը.....	12
Միջազգային փորձ.....	13
Հայեցակարգով նախատեսված նպատակներն ու խնդիրները.....	14
Պրոբացիոն ծառայողների մասնագիտական որակներն ու կարողությունները.....	17
Ստեղծվող ազգային տեղեկատվական համակարգը .....	22
Մինչդատական զեկույցներ.....	25
Մեդիացիայի վերաբերյալ.....	26
Պրոբացիոն ծառայողների ամենօրյա գործառույթներն ու դրանց օրենսդրական ամրագրումը.....	28
Պրոբացիոն ծառայության գործառույթները չորս փուլերում իրականացնելը.....	29
Պրոբացիոն ծառայության կիրառումը ըստ հանցագործությունների տեսակների.....	32
Էլեկտրոնային մոնիթորինգ .....	33
Եզրակացություն.....	34

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացված պրոբացիոն ծառայության և հայեցակարգի գնահատմանն ուղղված հետազոտության վերաբերյալ կազմված հաշվետվությունը:

Հետազոտության իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ-ում պրոբացիոն ծառայության հիմնադրման հայեցակարգն ու քրեական օրենսդրության՝ ներկայումս ընթացող բարեփոխումները:

Գնահատումը նպատակ է հետապնդում հավաքել քրեակատարողական համակարգի բարեփոխումներին վերաբերող տեղեկատվություն և գնահատել դրանց հնարավոր ազդեցությունը համակարգի բարեփոխման վրա: Վերջինս նպատակ ունի հասցեագրել հետևյալ խնդիրները՝

- ինչ հիմնական մոտեցումներ են որդեգրված քրեակատարողական համակարգը բարեփոխելու համար,
- որքանով են դրանք համապատասխանում սահմանված միջազգային չափանիշներին,
- որքանով են առաջարկված փոփոխությունները և հատկապես ստեղծվող պրոբացիոն ծառայությունը իրատեսական և ինչ չափով են հասցեագրելու ոլորտում առկա խնդիրները
- ինչպիսի ռիսկեր են առկա պրոբացիոն ծառայության հայեցակարգում:

## **Մեթոդաբանություն**

Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով և ներառում է տեսական և պրակտիկ մաս:

Տեսական մասն իրենից ենթադրում է հանրությանը հասանելի ներպետական օրենսդրական կարգավորումների փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Պրակտիկ մասը հնարավոր է դարձել իրականացնել հատուկ մշակված հարցաշարերի միջոցով՝ ոլորտի տարբեր մասնագետների հետ հարցազրույցների արդյունքում: Ընդհանուր առմամբ իրականացվել է թվով 12 հարցազրույց՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և քրեական օրենսգրքի փոփոխությունների աշխատանքային խմբի հետ: Ուսումնասիրության նախնական տարբերակը ներկայացվել է ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչությանն ու Արդարադատության նախարարությանը, որոնց կողմից ներկայացված նկատառումները հաշվի են առնվել: Վերջիններիս կողմից ներկայացված կարծիքները ներկայացվում են հետազոտությանը կից:

Կազմակերպությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում հարցազրույցներին ներգրավված և ուսումնասիրության վերաբերյալ կարծիք հայտնած բոլոր մասնագետներին:

## **Պրոբացիոն համակարգի օրենսդրական հիմքերը**

ՀՀ-ում իրավական և դատական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու համար 2009թ. ապրիլի 21-ին ստորագրվել է «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թթ ռազմավարական գործողությունների ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրությունը<sup>1</sup>: Կարգադրությամբ որպես առաջնային նպատակ են սահմանվել անկախ ու հանրության առջև հաշվետու, թափանցիկ, մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատաիրավական համակարգի օրենսդրության ու ռազմավարության բարելավումը, ինչպես նաև քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացումը:

2011 թվականի Կարգադրությանը հաջորդել է 2012 թվականի ՀՀ Նախագահի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությունը, որը, իր հերթին, նպատակ ունի շարունակել սկսված բարեփոխումները և մասնավորապես՝ հաստատել «ՀՀ Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը»:

Իրականացված և իրականացվող բարեփոխումների մեջ քրեակատարողական համակարգի բարելավումը շարունակվում է ընկալվել որպես խիստ սկզբունքային նպատակ և մինևույն ժամանակ խնդիր:

ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսված է նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի մշակումը, որը պետք է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվի 2015 թվականի սեպտեմբեր:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Նախագահի Կարգադրությունը Դատաիրավական Բարեփոխումների 2009-2011 թվականների Ռազմավարական Գործողությունների Ծրագիրը Եվ Ծրագրից Բխող Միջոցառումների Ցանկը Հաստատելու, Ինչպես նաև Աշխատանքային խումբ ստեղծելու մասին, 21.04.2009թ, հասանելի է՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66236> հասցեում

րին: Փոփոխվող օրենսգրքի ուժի մեջ մտնելով փոփոխության կենթարկվի նաև ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, միևնույն ժամանակ քրեական դատավարության օրենսգիրքը: Այսինքն, տեղի է ունենում մի իրավական ակտից բխող այլ օրենսդրական ակտերի փոփոխություն ևս: Վերջիններիս փոփոխությունները, սակայն, ավելի դանդաղ են ընթանում:

Նախատեսվող փոփոխությունների մեջ, ի թիվս ենթակառուցվածքային, ինստիտուցիոնալ ու օրենսդրական այլ փոփոխությունների, նախատեսվում է նաև Պրոբացիայի ծառայության ստեղծումը:

ՀՀ-ում ներկայումս գոյություն չունի պրոբացիայի առանձին ծառայություն: Վերջինիս բնորոշ մի շարք լիազորություններ իրականացնում են ՀՀ քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները: Հաշվի առնելով ՀՀ ապագա քրեական օրենսգրքում պրոբացիայի՝ որպես հանցագործի ուղղման և վերաինտեգրման մեխանիզմի նախատեսումը, կրկնահանցագործությունների բարձր աստիճանի դեմ պայքարի արդյունավետ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ ներկայումս ՀՀ-ում արդիական է այնպիսի կառույցի ստեղծումը, որն արդյունավետ կերպով կիրականացնի այդ գործառույթները<sup>2</sup>:

Պրոբացիայի ծառայության ստեղծումը հիմնավորվում է մի կողմից քրեական արդարադատության ոլորտում Եվրոպական երկրների որդեգրած քաղաքականությամբ, մյուս կողմից ՀՀ դատական պրակտիկայով: Մասնավորապես այն հանգամանքով, որ քրեական գործերի մինչդատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է մեծամասամբ կալանավորումը, իսկ որպես որոշումների հիմնավորում նշվում է հիմնականում քննությունից խուսափելը կամ քննությանը խոչընդոտելը: Ինչով պայմանավորված ՀՀ-ում հանցանք կատարած անձանց նկատմամբ մեծամասամբ նշանակվում է ազատազրկման ձևով պատիժ<sup>3</sup>:

Հայեցակարգի համաձայն՝ ՀՀ-ում պրոբացիայի ներդրումը կնպաստի մի կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների անհարկի նշանակման պրակտիկայի վերացմանը, մյուս կողմից՝ կնվազեցնի քրեակատարողական հիմնարկների գերբնակեցումն ու կնպաստի դատապարտյալների վերասոցիալականացմանը:

Հայեցակարգով պրոբացիայի ծառայության նպատակներն են հանցագործությունների նվազեցումը՝ վերահսկելով, ուղղորդելով ու աջակցելով հանցանք կատարած անձանց և նպաստելով նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը, հասարակության անվտանգությանը և արդարադատության իրականացմանը:

Հատկանշական է, սակայն, որ չնայած վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է միտում՝ օրենսդրության միջազգային չափանիշներին համապատասխանելիության առումով, այնուհանդերձ, արդյունավետության առումով այդ գործընթացը դեռևս թերի է. տեղի է ունենում առանձին օրենսդրական ակտերի փոփոխություն՝ առանց բարձրացված նպատակների արդյունավետ լուծմանն ուղղված համալիր և համակարգային բարեփոխումների: Բացի այդ, իրականացվող փոփոխությունները դանդաղ են ընթանում, իսկ առկա խնդիրները շարունակում են մնալ չթիրախավորված:

Այս մոտեցումն է նկատվում նաև պրոբացիոն ծառայության ներդրմանն ուղղված աշխատանքների կապակցությամբ: Չնայած հայեցակարգը վերջնականացվել է ՀՀ Արդարադատության նախարարության կողմից, սակայն դեռևս հաստատված չէ իրագործման համար: Բացի այդ, այն աչքի է ընկնում ռիսկային համարվող մի շարք հարցերով, որոնք ապագայում հնարավոր է խնդիրների հանգեցնեն:

<sup>2</sup> Ռազմավարական ծրագիր ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների, հասանելի է [http://www.justice.am/storage/files/improvements/improvements\\_5091018222\\_753.pdf](http://www.justice.am/storage/files/improvements/improvements_5091018222_753.pdf) հասցեում

<sup>3</sup> Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման մասին, հասանելի է՝ <http://moj.am/legal/view/article/598> հասցեում

## Պրոբացիոն ծառայության հակիրճ նկարագրություն

Պրոբացիայի տակ հասկացվում է վերահսկողության բազմապիսի միջոցառումների ամբողջություն՝ ուղղված ազատության պայմաններում հանցանք կատարած անձի վերահսկողությանը: Պրոբացիայի տակ ընկալվում է նաև «պայմանականության» որոշակի տարր, քանի որ կրկին հանցանք կատարելու կամ սահմանված պայմանները խախտելու դեպքում անձը կրկին կկանգնի դատարանի առջև և կենթարկվի պատժի: Պրոբացիայի պարագայում իրականացվող վերահսկողության կարևոր առանձնահատկությունն աջակցության և խորհրդատվության առկայությունն է: Նման կերպ տարվող աշխատանքի հիմնական նպատակը հանցանք կատարած անձի սոցիալական վերաինտեգրմանը և հասարակության անվտանգությանը նպաստելն է, ինչն էլ իրականացվում է պրոբացիոն ծառայողների կողմից:

Սկիզբ առնելով տասութերորդ դարի Անգլիայի իրավական համակարգից՝ այն ավելի ուշ տարածում է գտնում Եվրոպական այլ երկրներում ևս<sup>4</sup>: Սկզբնական շրջանում հանդես գալով որպես բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից հանցանք կատարած անձանց կյանքական և բարոյական օգնության տրամադրում, հետագայում այդ ծառայությունները ստանում են նորմատիվ կարգավորում և ինտեգրվում քրեական արդարադատության համակարգերում: Որպես արդյունք, այսօր այն երկրները, որտեղ պրոբացիոն ծառայությունը կայացել է, ուշադրություն է դարձվում ոչ թե սոսկ հանցանքին, այլ այն սոցիալական և քրեածին խնդիրներին ու հանգամանքներին, որոնցով պայմանավորված է հանցածին վարքագիծը:

Իրավական տեսանկյունից պրոբացիան նախատեսված է նախ «Միավորված Ազգերի կազմակերպության՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոններով» /Տոկիոյի Կանոնները<sup>5</sup>/: Վերջինս սահմանում է հիմնական եւ կարեւորագույն սկզբունքները, որոնց միջոցով խթանվում է ազատությունից զրկելու հետ կապ չունեցող եւ այլընտրանքային պատժամիջոցների կիրառությունը, որոնց մեջ առանձին դեր ունի պրոբացիոն ծառայությունը:

Ներկայումս պրոբացիոն ծառայության հետ կապված մի շարք սկզբունքային հարցեր կարգավորվում են նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից անդամ երկրներին ուղղված 2010/1 հանձնարարականով<sup>6</sup>:

Ընդհանուր առմամբ պրոբացիան ընկալվում է որպես վերականգնողական արդարադատության ծրագիր, ինչի շրջանակներում հանցանք կատարած անձը ազատությունից չի զրկվում, սակայն կրում է համապատասխան պատիժ, իսկ քրեական արդարադատության առջև դրված նպատակներն ավելի հեշտ և էժան միջոցներով են իրականացվում<sup>7</sup>:

<sup>4</sup> European Probation Service Systems, A comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu

<sup>5</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), G.A. res. 45/110, annex, 45 U.N. GAOR Supp. (No. 49A) at 197, U.N. Doc. A/45/49 (1990).

<sup>6</sup> Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules

<sup>7</sup> What are the benefits and costs of probation? by Faye S. Taxman George Mason University (USA)

# ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## Օրենսդրական կարգավորումների բացթողումներ

Ինչպես արդեն նշվել է, ներկայումս իրականացվում են ՀՀ քրեական օրենսգրքի, քրեական դատավարության օրենսգրքի և քրեակատարողական օրենսգրքի բարեփոխումները, ինչը ըստ էության կարող է հանգեցնել քրեական արդարադատության կարգավորումների համակարգային բարեփոխումների:

Այս պահին հանրությանը հասանելի քրեական օրենսգրքի նախագծի հայեցակարգը, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգը որևէ նշում կամ հիշատակում չեն պարունակում նախատեսվող պրոբացիոն ծառայության մասին<sup>8</sup>: Սակայն քրեական օրենսգրքի հատուկ մասում պարունակվող պատժատեսակները պետք է կոնկրետ նշում ունենան պրոբացիա նշանակվելու դեպքում կիրառվելու մասին: Ավելին, օրենսգրքի ընդհանուր մասում պետք է սահմանվեն որոշակի չափանիշներ, որոնք հետագայում հիմք կհանդիսանան պրոբացիա նշանակելիս: Բացի այդ, պատժողական քաղաքականության, սկզբունքների և ըստ կատարված հանցագործության ծանրության աստիճանի պատիժ նշանակելիս պետք է քննարկվի նաև պրոբացիայի կիրառման հարցը: Այսինքն, քրեական օրենսգրքի առանձին բաժիններում պրոբացիոն ծառայության վերաբերյալ դրույթները պարտադիր են: Իսկ քրեական դատավարության օրենսգիրքը պետք է ընթացակարգային առումով դրույթներ սահմանի պրոբացիայի վերաբերյալ, որոնց մանրամասն կարգավորումը հղումով կուղղորդվի կամ քրեակատարողական օրենսգրքի և/ կամ «Պրոբացիոն ծառայության մասին» օրենքի համապատասխան կարգավորումներին:

Պրոբացիոն ծառայության իրականացումն ապահովվում է առանձին միջոցառումների և սանկցիաների միջոցով, որոնք իրենցում կպարունակեն այլընտրանքային պատժամիջոցների տարրեր: Չուտ քրեաիրավական տեսանկյունից նման պատժատեսակները չեն կարող նշանակվել կոնկրետ անձի նկատմամբ, քանի դեռ դրանք նորմատիվ ամրագրում չունեն<sup>9</sup>: Տվյալ պարագայում, հաշվի առնելով Քրեական օրենսգրքի հատուկ մասի նպատակային նշանակությունը, պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող նոր պատժատեսակները պետք է սահմանվեն հատկապես Քրեական օրենսգրքի հատուկ մասով: Պրոբացիոն ծառայության լավագույն փորձը պահանջում է, որ այլընտրանքային պատժատեսակների իրավական հիմքերը նախատեսված լինեն արդարադատության իրականացման գործընթացի յուրաքանչյուր փուլում<sup>10</sup>:

Պրոբացիոն ծառայության օրենսդրական ամրագրման կապակցությամբ ներկայիս Հայեցակարգի և Քրեական օրենսգրքի հայեցակարգի նախագծի վերաբերյալ ոլորտի մասնագետների կարծիքները հակասական են: Մասնագետների մի մասը, ներառյալ նաև Քրեական օրենսգրքի աշխատանքային խումբը, ՀՀ Արդարադատության նախարարությունը, գտնում են, որ Քրեական օրենսգրքում պրոբացիայի վերաբերյալ դրույթներ չպետք է լինեն: Որպես հիմնավորվում նշվում է այն, որ պրոբացիան օրենսգրքով կսահմանվեր, եթե այն որպես առանձին պատժատեսակ նախատեսվեր: Նման մոտեցումը բացատրվում է այն հանգամանքով, որ Քրեական օրենսգրքով սահմանվում են հանցագործության և քրեական արդարադատության վերաբերյալ նյութական հիմքեր, իսկ պրոբացիայի հետ կապված հարցերը պետք է տեղ գտնեն Քրեակատարողական օրենսգրքում և առանձին օրենքներում:

<sup>8</sup> <http://moj.am/legal/drafts>

<sup>9</sup> Handbook on Probation Services, Guidelines for Probation Practitioners and Managers, UN Interregional Crime and Justice Research Institute

<sup>10</sup> Handbook of basic principles and promising practices on Alternatives to Imprisonment, UN Office on Drugs and Crime, New York 2007



Մասնագետների մեկ այլ խումբ առանձնակի կարևորում է Քրեական օրենսգրքի ու պրոբացիոն ծառայության վերաբերյալ հայեցակարգի համաձայնեցվածությունը, ինչի կարևոր նախապայման է պրոբացիոն ծառայության վերաբերյալ առանձին դրույթների ամրագրումը օրենսգրքի մեջ: Այս փուլում օրենսգրքի և հայեցակարգի անհամաձայնեցվածությունն ու թերի կարգավորումը հետագայում պրոբացիոն ծառայության իրականացմանը խոչընդոտող հանգամանք է դիտարկվում:

Այս առումով հատկանշական է նաև այն, որ համաձայն «Քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները»՝ դեռևս 2013թ-ին պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ընդունման<sup>11</sup>:

## **Միջազգային փորձ**

Եվրոպական երկրների մեծամասնությունում պրոբացիոն ծառայության օրենսդրական հիմքերը նախ և առաջ նախատեսված են քրեական օրենսդրությամբ կամ դրան զուգահեռ առանձին իրավական ակտերով: Նման մոտեցումը գործում է մասնավորապես Բելգիայում, Էստոնիայում, Չեխիայում, Ֆրանսիայում, Հունգարիայում, Մեծ Բրիտանիայում և այլն<sup>12</sup>: Երկրների մեկ այլ խմբում պրոբացիոն ծառայությունը նախատեսվում է նաև քրեական դատավարության օրենսգրքում:

Ծառայության վերաբերյալ կազմակերպչական ու գործառնական հարցերը, որոնք ներառում են օրինակ պրոբացիոն ծառայողների առօրյա գործառնությունները, նախատեսում են դրանց իրականացման կարգն ու եղանակները, ընդունվում են առանձին իրավական ակտերով: Վերջիններս, ըստ էության, հստակեցնում ու պարզաբանում են օրենսգրքով սահմանված ընդհանուր դրույթները: Նման մոտեցում առկա է Բուլղարիայում, Դանիայում, Լիտվայում, Նորվեգիայում և Իսպանիայում: Նշված երկրներում օրենսդրական հիմքերը հանդես են գալիս հարկադիր կատարողական օրենքների տեսքով: Իսկ առանձին գործառնությունների իրականացման համար հնարավոր է ընդունել նաև նախարարական հրամաններ կամ հրահանգներ<sup>13</sup>:

**ԱՌԱՋԱՐԿ:** Քրեական օրենսգրքի ընդհանուր մասում նախատեսել դրույթներ պրոբացիոն ծառայության իրականացման ընդհանուր չափանիշների վերաբերյալ՝ հղում տալով Քրեակատարողական օրենսգրքին, ինչպես նաև «Պրոբացիոն ծառայության մասին» ընդունվող օրենքին: Հատուկ մասի այլընտրանքային պատիժների ցանկը հարմարեցնել պրոբացիոն ծառայությանը:

<sup>11</sup> Քրեական Արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, հասանելի է [http://www.justice.am/storage/files/improvements/improvements\\_5091018222\\_753.pdf](http://www.justice.am/storage/files/improvements/improvements_5091018222_753.pdf) հասցեում

<sup>12</sup> European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu

<sup>13</sup> Առանձին երկրներում պրոբացիոն ծառայության օրենսդրական հիմքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվում է ուսումնասիրությանը կից ներկայացվող գրաֆիկական պատկերում

## **Պրոբացիոն ծառայության ինստիտուցիոնալ կառուցվածքը**

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունն է:

Պրոբացիոն ծառայության հայեցակարգով նախատեսված է ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիոն ծառայություն: Հստակեցված է, սակայն, ստեղծվող պրոբացիոն ծառայության և քրեակատարողական ծառայության ներսում գործող քրեակատարողական վարչության գործառույթների և դերերի բաշխման, դրանց հնարավոր խաչման, նույնացման հարցերը, այն դեպքում, երբ ստեղծվող պրոբացիայի ծառայության լիազորությունների և գործառույթների շրջանակը, սկզբնական շրջանում կընդգրկի երկու, իսկ հետագայում բոլոր 4՝ մինչդատական փուլը, դատական, պենիտենցիար և հետպենիտենցիար փուլերը: Իսկ հատկապես պենիտենցիար փուլի համար նախատեսված գործառույթներն ու իրավասությունների շրջանակը համընկնում է քրեակատարողական վարչության/այլընտրանքային պատիժների կատարման բաժնի գործառույթներին:

Պրոբացիոն ծառայության արդյունավետությունը կախված է նաև մարդկային գործունից և նրանից, թե սահմանված ֆունկցիաները ով և ինչպես է իրականացնելու, ինչը կարևորելով հանդերձ՝ ավելի է բարդացնում քննարկվող հարցը: Այդ է պատճառը, որ հարցի վերաբերյալ մեկ միասնական հայտարարի եկող լուծում դեռևս չի ստացվել:

Մասնագետների մի խումբ գտնում է, որ ներկայումս առկա այլընտրանքային պատիժների կատարման բաժինը պետք է պահպանել և աշխատակիցների մի մասին դելեգացնել պրոբացիոն ծառայության ֆունկցիաները՝ կարևորելով այդ աշխատակիցների պրակտիկ աշխատանքային փորձը: Իսկ պրոբացիոն ծառայության ֆունկցիաների մտացած մասը թողնել նոր աշխատակիցների/բաղաբացիական ծառայողների վրա, ովքեր տեսական գիտելիքներով զինված երիտասարդ համալսարանավարտներ կլինեն, և, ըստ եուրոյան, սկզբնական շրջանում կաշխատեն առաջինների օգնությամբ: Այս մոտեցման կողմնակիցների կողմից նշվել է նաև, որ պետք է պահել ԶԿՀ-ների սոցիալ, հոգեբանական-իրավական ծառայությունները, ովքեր կշարունակեն դատապարտյալների հետ իրենց ամենօրյա աշխատանքները, որոնց համար պրոբացիոն ծառայությունը որպես գնահատող ծառայություն հանդես կգա: Պետք է, սակայն, ԶԿՀ-ում դատապարտյալի հետ աշխատելիս հստակեցնել պրոբացիոն ծառայողի և սոցիալ-հոգեբանական բաժնի աշխատակցի գործառույթները, հակառակ դեպքում այս փուլում է, որ նկատելի կլինի ֆունկցիաների կրկնություն:

Ի տարբերություն այս մոտեցման, մասնագետների մեկ այլ խումբ առաջարկում է պրոբացիոն ծառայությունը վստահել լրիվ նոր մարմնի և աշխատակիցների, ովքեր նախկինում չեն աշխատել քրեակատարողական համակարգում և չունեն դրան բնորոշ մտածելակերպ: Կօգտագործվեն հատուկ ծրագրով սովորած համալսարանավարտների կարողությունները, իսկ այլընտրանքային պատիժների կատարման բաժինը կվերանա, բանի որ նրա ֆունկցիաները կանցնեն պրոբացիոն ծառայությանը:

«Պրոբացիոն ծառայության մասին» օրենքի ընդունումից հետո արդեն կհստակեցվի ծառայողների կարգավիճակը, պաշտոնի անձնագիրն ու ինստիտուցիոնալ կառուցվածքն ու տեղակայումը:

## Միջազգային փորձ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պրոբացիոն ծառայությունը հիմնականում գործում է պետական ապարատի կողմից՝ գործադիր կամ դատական իշխանության համակարգում<sup>14</sup>: Գոյություն ունեն երկրներ, ինչպիսիք են օրինակ Մոլդովան և Ռումինիան, որտեղ պրոբացիոն ծառայությունը ներառված է Արդարադատության նախարարության մեջ՝ որպես առանձին և ինքնուրույն մարմին: Նույնիսկ այն դեպքում, երբ պրոբացիոն ծառայությունը մասնավոր սեկտորին է հանձնված, այնուամենայնիվ իրականացվում է վերահսկողություն արդարադատության նախարարության կողմից: Նման պրակտիկա գործում է օրինակ Յուլանդիայում<sup>15</sup>:

Յուրաքանչյուր դեպքում անկախ այս կամ այն իշխանության ներքո կոնկրետ մարմնի մեջ ներառված լինելու հանգամանքից կամ անկախ մարմին ստեղծվելու փաստից, կարևորված է պրոբացիոն ծառայության և պրոբացիոն ծառայողների առջև դրվող կոնկրետ խնդիրներն ու դրանից բխող գործառույթները: Ինչը արդյունավետ պրոբացիոն ծառայություն իրականացնելու երաշխիքներից մեկն է:

Եվրոպական փորձը ցույց է տալիս, որ հստակ մոդել, թե ինչպիսի մարմին և պետական ապարատի որ մարմնի կազմում է ներառված լինելու պրոբացիոն ծառայությունը, գոյություն չունի: Պետությունները այս առումով ավելի ազատ են: Կարևոր է սակայն այն հարցը, թե ինչքանով է պրոբացիոն ծառայության ֆունկցիաները հստակ նախատեսված, ինչպես է ապահովվում համագործակցությունը ոլորտի այլ մարմինների հետ, և ինչպես է լուծվում գործառույթների հնարավոր բախման հարցը: Սա ինչ խոսք այն հարցերից է, որը պետք է ԶԶ-ում առավել մեծ ուշադրության արժանանա:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ:** Հաշվի առնելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ ինչեզրված մասնագիտական կարծիքները՝ առաջարկվում է հայեցակարգով նախատեսված ինքնուրույն մարմնում որպես պրոբացիոն ծառայողներ ներգրավել ինչպես համակարգի փորձառու աշխատակիցների, ովքեր կլինեն այլընտրաբանային պատիժների կատարման բաժնի աշխատակիցներից, այնպես էլ նորավարտ սոցիալական աշխատողներ, սոցիոլոգներ ու հոգեբաններ: Հստակ տարանջատել նորաստեղծ մարմնի նախատեսվող գործառույթները պահպանվող այլընտրանքային պատիժների կատարման բաժնի գործառույթներից՝ վերջիններիս ֆունկցիաների իրականացման եղանակների, վայրի և առնչվող այլ գործոնների կոնկրետացմամբ:

## Հայեցակարգով նախատեսված նպատակներն ու խնդիրները

Հայեցակարգով պրոբացիոն ծառայության **նպատակներն են՝ հանցագործությունների նվազեցումը՝** վերահսկելով, ուղղորդելով ու աջակցելով հանցանք կատարած անձանց և նպաստելով նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը, հասարակության անվտանգության և արդարադատության իրականացմանը: Մինևույն ժամանակ, սահմանված են նաև պրոբացիոն ծառայության խնդիրները, որոնք են՝ նպաստել հանցագործությունների կատարման ու կրկնահանցագործությունների նվազմանը:

<sup>14</sup> Տեղեկատվությունը հասանելի է [http://www.cep-probation.org/default.asp?page\\_id=157&map\\_id=152](http://www.cep-probation.org/default.asp?page_id=157&map_id=152) հասցեում

<sup>15</sup> Նյութը հասանելի է հետևյալ հասցեում՝ [http://www.cepprobation.org/default.asp?page\\_id=157&map\\_id=27](http://www.cepprobation.org/default.asp?page_id=157&map_id=27)

Հայեցակարգով դրա նպատակն ու խնդիրների նշված բլոկը նույնացված է, այսինքն՝ այդ խումբ խնդիրների և նպատակի միջև հստակ տարանջատում չկա: Մինչդեռ, նպատակները պետք է ավելի լայն և ընդհանուր արժեքային լինեին, որից կբխեն խնդիրները: Որպես խնդիր կարելի էր նշել, օրինակ, այն մարտահրավերները, միջոցներն ու քայլերը, որոնք պետք է հաղթահարվեն ու ձեռնարկվեն հանցագործությունների նվազման համար, ինչպես նաև հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման համար:

Հայեցակարգով նախատեսված խնդիրներն ու նպատակները, ըստ էության, նույնացված են և հստակ տարանջատում չկա նպատակի և խնդիրների միջև: Նշված խնդիրները ինքնին նպատակի մաս են հանդիսանում: Մասնավորապես, պրոբացիոն ծառայության նպատակ է սահմանվել հանցագործությունների նվազումը, ինչին հասնելու համար սամանվել են նաև հնարավոր եղանակները: Որպես խնդիր նշված են կրկնահանցագործությունների նվազմանը *նպաստելու*, հանցագործությունների կատարմանը *նպաստելու*, ՔԿԶ-ների բեռնաթափմանը *նպաստելու* և այլ հանգամանքներ: Մինչդեռ, որպես խնդիր պետք է նշվեին այն գործողությունները և կոնկրետ միջոցառումները, որոնք ուղղված կլինեին նպատակի իրագործմանը և ոչ թե սոսկ նպաստեին և բառացիորեն կրկնեին նպատակով սահմանված դրույթները:

Ավելին, մտահոգության տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ **ՔԿԶ-ների բեռնաթափումը դիտարկվում է որպես խնդիր**: Բնականաբար գերբեռնվածությունը կենտրոնական խնդիր և հրատապ լուծում պահանջող հարց է, որը սակայն չպետք է շփոթել ոչ պրոբացիոն ծառայության նպատակի, ոչ էլ խնդիրների հետ: ՔԿԶ-ների բեռնաթափումը պետք է հանդիսանա սոսկ արդյունավետ պրոբացիոն ծառայության իրականացման բնականոն ընթացքի **արդյունք**:

Հարցի կապակցությամբ ոլորտի մասնագետները գտնում են, որ ՀՀ-ում պրոբացիոն ծառայության նպատակը հասարակության ընդհանուր դաստիարակությունն է լինելու, հանցավորության ու պատժի վերաբերյալ մոտեցման փոփոխությունը, որով պատժողական քաղաքականությունը կլինի անձակենտրոն և ոչ թե արարքակենտրոն, այսինքն, դատարանները կսկսեն ուշադրություն դարձնել ոչ միայն արարքին ու հողվածին, այլ անձին, նրա առանձնահատկություններին, սոցիալական հանգամանքներին՝ նպատակ ունենալով նվազեցնել կրկնահանցագործության ռիսկերն ու բարձրացնել վերասոցիալականացման մակարդակը: Բացի այդ, ըստ փորձագետների, պրոբացիոն ծառայությունը նպատակ պետք է հետապնդի նաև օժանդակել պատիժ նշանակող մարմիններին՝ առավել արդյունավետ պատիժ նշանակելու համար մասնագիտական կարծիք տրամադրելով: Ինչը կնպաստի քրեակատարողական հիմնարկների թեթևացմանն ու քրեակատարողական համակարգի գործունեության թիրախավորմանը և կհանգեցնի հանցավոր շերտերի պակասմանը:

### **Միջազգային փորձ**

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2010/1 Պրոբացիոն կանոնների վերաբերյալ հանձնարարականի համաձայն պրոբացիան հանցագործություն կատարած անձի նկատմամբ հասարակության մեջ օրենքով սահմանված կարգով նշանակված սանկցիաների և միջոցառումների իրականացումն է, որը իրենում պարունակում է հսկողության, խորհրդատվության և օգնության տարրեր ու գործողություններ և որի նպատակն է նպաստել անձի սոցիալական վերաինտեգրմանն ու հասարակության անվտանգությանը<sup>16</sup>: Հանձնարարականի մեկնաբանությունների համաձայն պրոբացիոն

<sup>16</sup> Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules (Adopted by the Committee of Ministers on 20 January 2010 at the 1075th meeting)

ծառայությունը գործում է որպես քրեական արդարադատության համակարգի մաս: Վերջինիս նպատակը, ըստ էության, հանցագործների հետ աշխատելու և օրինապահ վարքագիծ խրախուսելու միջոցով նրանց վերաինտեգրումն է: Ինչը հնարավոր է իրագործել համապատասխան պայմաններ ստեղծելու, նրանց կարողությունները զարգացնելու և օրինապահ վարքագիծ ցուցաբերելուն մոտիվացնելու միջոցով:

Փաստորեն, պրոբացիոն ծառայության հիմնական և կենտրոնական նպատակը հանցագործություն կատարած անձանց **սոցիալական վերաինտեգրումն է**, ինչը իր հերթին կնպաստի հանցավորությունների նվազմանը<sup>17</sup>: Իսկ ծառայության խնդիրները այն կոնկրետ մարտահրավերներն ու պատներշներն են, որոնք պետք է լուծել պրակտիկայում նպատակին ասինելու համար:

**ԱՌԱՋԱՐԿ:** Հարցի կապակցությամբ առաջարկվում է հայեցակարգի նպատակների և խնդիրների բաժինը վերանայել: Նախ, հստակեցնել պրոբացիոն ծառայության կոնկրետ ֆունկցիաները, դրա հետ կապված մարտահրավերներն ու իրականացման կոնկրետ եղանակները: Խնդիրները վերաձևակերպել՝ ելնելով պրոբացիոն ծառայության այն առաջադրանքներից և ծառայողների գործառույթներից, որոնց իրականացումը կհանգեցնի նպատակին:

## **Պրոբացիոն ծառայողների մասնագիտական որակներն ու կարողությունները**

Համաձայն վերոնշյալ քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների՝ դեռևս 2014 թվականի մարտին նախարարության կողմից մշակվել է պրոբացիոն ծառայության աշխատակիցների մասնագիտական ուսուցման համակարգը: Սակայն լրացուցիչ տեղեկություն, թե խոսքը կոնկրետ ինչ համակարգի մասին է, ինչպես է այն մշակվել և որոնք են արդյունքները, բացակայում է:

Պրոբացիոն ծառայության հայեցակարգով պրոբացիոն ծառայության ստեղծման անհրաժեշտությունների թվում նշված է նաև քրեակատարողական **գործող համակարգում մասնագիտական որակների անբավարարությունը, ինչը վկայում է այն** մասին, որ համակարգն անկարող է արդյունավետորեն կազմակերպել պրոբացիոն լուրջ ծառայության գործունեությունը:

Այս առումով, նախ հստակեցված չէ, թե ովքեր են լինելու պրոբացիոն ծառայողները: Սահմանված չէ պրոբացիոն ծառայության աշխատակիցների մասնագիտական որակների և անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման, ինչպես նաև զարգացման հնարավոր ուղիները: Մինևույն ժամանակ, անպատասխան է մնում այն հարցը, արդյո՞ք մասնագիտական որակների և անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման համար կազմակերպվող կարճաժամկետ վերապատրաստումները ունակ կլինեն մասնագետներին զինել անհրաժեշտ հմտություններով: Ոլորտին առնչվող մասնագետների կարծիքով երկարատև և որակյալ վերապատրաստումները կկարողանան տալ այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են: Իսկ գետելիքների առումով մեծ դեր կխաղա համալսարանական կրթությունը: Առաջարկվել է, օրինակ, համագործակցել ԵՊՀ Կրիմինալոգիա մագիստրոսական ծրագրի շրջանավարտների հետ: Ծրագիրը ինքնին լայն պրոֆիլի է և պրոբացիայի վերաբերյալ

of the Ministers' Deputies)

<sup>17</sup> 1075 Meeting, 20 January 2010, European Committee on Crime Problems (CDPC) ՎՆ d. Commentary to Recommendation CM/Rec (2010) 1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe probation rules

հատուկ դասեր է պարունակում: Հոգեբանության և սոցիոլագիայի ուսանողները ծրագրի շրջանակներում հնարավորություն ունեն կրիմինոլոգիա սովորել և պատրաստվել պրոբացիոն ծառայող դառնալուն:

Պրոբացիոն ծառայության արդյունավետության գրավականներից է նաև պրոբացիոն ծառայողի ուղղակի կապը և անմիջական աշխատանքը հանցագործություն կատարած անձի հետ, ինչը կկազմի նրա աշխատանքի մեծ մասը<sup>18</sup>: Այդ նպատակով կարևորվում է, որ պրոբացիոն ծառայողը ոչ միայն համապատասխան գիտելիք և կարողություն ունենա, այլ նաև հանցագործի հետ աշխատելու փորձ: Դա է պատճառը, որ առաջարկվել է նաև օգտագործել այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցների փորձն ու նրանց ևս ներգրավել պրոբացիոն ծառայությունում՝ համապատասխան վերապատրաստումներ անցնելուց հետո:

Ըստ այդմ, ՀՀ-ում պրոբացիոն ծառայողների կարգավիճակում հնարավոր է լինեն՝

- կամ լրիվ նոր աշխատակիցներ, ովքեր կունենան համալսարանական համապատասխան կրթություն և տեսական գիտելիքներ, սակայն փորձի բացակայությամբ
- Կամ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցներ, ովքեր ունեն հանցագործի հետ աշխատանքի փորձ, սակայն նրանց մոտ բացակայում են վերականգնողական արդարադատության կոնցեպտից բխող կարողություններն ու գիտելիքները:
- Վերոնշյալ երկու խմբերը միասին՝ հատուկ, երկարատև վերապատրաստումներ անցնելուց հետո:

Անկասկած վերոնշյալ բոլոր դեպքում էլ խնդիրները անխուսափելի են: Քանի որ համալսարանավարտ ուսանողը պետք է նախ հանցագործի հետ աշխատելու ունակություն ունենա, որից հետո կկարողանա կիրառել իր գիտելիքները: Սա երկար ժամանակ և լուրջ աշխատանքներ կպահանջի: Իսկ այլընտրանքային պատիժների կատարման բաժինների աշխատակիցների փորձը կոնցեպտուալ առումով էականորեն կտարբերվի պրոբացիոն ծառայության համար անհրաժեշտ աշխատանքային փորձից, քանի որ այդ փորձը գալիս է պատժողական համակարգից:

Երիտասարդ կադրերի հարցում որոշ մասնագետներ մտահոգություն են հայտնում նրանց կողմից կատարված աշխատանքը՝ դատավորների կամ դատախազի կողմից ընդունելի լինելու կապակցությամբ: Հնարավոր է, որ երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող դատավորն ավելի մեծ ուշադրություն դարձնի իր ներքին համոզմանը, քան պրոբացիոն աշխատակցի կողմից պատրաստված մինչդատական զեկույցին:

Երկրորդ դեպքում մտահոգության տեղիք է տալիս արմատացած պատժողական մտածողությունը, ինչը դժվար կլինի փոխել մի քանի վերապատրաստումների աղյուսքում: Լուրջ մարտահրավեր է նաև հասարակության մեջ հանցագործների նկատմամբ առկա կարծրատիպերի վերացումը: Քանզի հասարակությանը ամենքից առաջ պետք է նախապատրաստել հանցանք կատարած անձին ազատության մեջ տեսնելուն, նրան օգնելուն և վերաինտեգրմանը նպաստելուն:

Ըստ ելության, պրոբացիոն ծառայությունը պետք է փոխի ոչ միայն համակարգի աշխատողների, պրոբացիոն ծառայողների մտածելակերպը, այլ հասարակության յուրաքանչյուր անդամին նախապատրաստի հանցագործի հետ աշխատելուն և ադեկվատ վերաբերմունք ցուցաբերելուն:

<sup>18</sup> House of Commons Justice Committee, The role of the Probation Service, Eight Report of Session 2010-2012

## Միջազգային ստանդարտներ

Երկրներում, որտեղ արդեն ներդրված է պրոբացիոն ծառայությունը, դրա իրականացումը խոչընդոտների է բախվել անձնակազմին առնչվող խնդիրների պատճառով: Անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ պրոբացիոն ծառայակիցների հետ կապված խնդիրները հիմնականում կապված են հետևյալ գործոնների հետ՝

- Պրոբացիոն ծառայության առջև դրված կոնկրետ գործառնությունների բացակայություն, որոնց կատարմանը պետք է ուղղված լինի ծառայակցի աշխատանքը,
- անբավարար ռեսուրսներ,
- հանցագործների աճող թիվ,
- հաշվետվողականության խիստ պահանջներ,
- պրոբացիան որպես բանտերի գերբեռնվածության միջոց օգտագործելու ճնշում,
- ծրագրի արդյունավետության հասնելու վերաբերյալ համաձայնեցվածության բացակայություն,
- արդյունքների գնահատման վերաբերյալ համաձայնության բացակայություն,
- կազմակերպչական կարողությունների ոչ ադեկվատ օգտագործում և այլն<sup>19</sup>:

Այս և նման խնդիրները լուծելու համար կարևորվում է անձնակազմի որակավորումն ու աշխատանքի ընդունման կոնկրետ չափանիշները:

ՄԱԿ-ի «Ազատությունից զրկելու հետ կապ չունեցող նվազագույն ստանդարտ կանոններ»-ով սահմանված են պրոբացիոն ծառայողների առջև դրվող հիմնական չափանիշներն ու համալրման սկզբունքները:

Նախ և առաջ սահմանվում է պրոբացիոն ծառայության համալրման անխտրական մոտեցումը: Ծառայողների աշխատանքի ընդունման քաղաքականությունը պետք է հաշվի առնի իրավախախտների զանազանությունը, ովքեր պետք է ծառայողների հսկողությանը հանձնվեն:

Պրոբացիոն ծառայողները պետք է համապատասխան մասնագիտական վերապատրաստում ստանան և պրակտիկ հմտություններ ունենան, որոնց համար ներկայացվող պահանջները պետք է կոնկրետ և իրատեսական լինեն: Այս նպատակով, պրոբացիոն ծառայողներին ներկայացվող պահանջները պետք է հաշվի առնեն մասնավորապես՝

- կրթությունը,
- նախկինում համանման փորձը,
- տարիքը,
- բժշկական, հոգեբանական չափանիշները,
- վերապատրաստումները,
- նախկինում հանցանք կատարած լինելու հանգամանքը:

Լավագույն փորձի համաձայն՝ աշխատակազմի հետ կապված խնդիրները լուծելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար պետք է՝

- Պրոբացիոն ծառայության տարեկան ստուգում իրականացվի, որը հաշվի կառնի առաջ քաշված նպատակները և դրանց իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները:
- Ընթացակարգերի մշակում, որը կգնահատի առկա հաստիքների համալրված լինելու հանգամանքը կամ ապագայում համալրելու հարցը:

<sup>19</sup> UN Interregional Crime and Justice Research Institute, Handbook on Probation Service, Guidelines for Probation Practitioners and Managers, Publication No. 60 Rome / London, March 1998, available at [http://www.unicri.it/services/library\\_documentation/publications/unicri\\_series/Probation\\_handbook.pdf](http://www.unicri.it/services/library_documentation/publications/unicri_series/Probation_handbook.pdf)

Աշխատանքի հստակ բաժանման համար պետք է առկա լինի՝

- Պաշտոնի հստակ անձնագիրը, էթիկայի կանոնները:
- Հաստիքի նպատակն ու հիմնական պարտավորությունները:
- Անհրաժեշտ կրթությունը, գիտելիքներն ու պահանջները:
- Պրոբացիոն աշխատանքի հիմնավորվածությունը:
- Անհրաժեշտ վերապատրաստումները:
- Հսկողությունը:
- Առողջությանը ներկայացվող պահանջները:
- Անվտանգության ապահովման երաշխիքները:

### **Անձնակազմի գնահատման համար անհրաժեշտ օպերացիոն ուղենիշներ**

- Ծառայության վերջնաժամկետում, ինչպես նաև դրա ընթացքում անձնակազմի յուրաքանչյուր աշխատակցի համար աշխատանքի կատարման գրավոր գնահատում,
- ստուգման յուրաքանչյուր ցիկլի սկզբում սահմանված չափանիշներին համապատասխան գործունեության գնահատում,
- անձնակազմի յուրաքանչյուր անդամի վերապատրաստման անհրաժեշտության բացահայտում որպես գործունեության տարեկան գնահատում,
- աշխատանքային յուրաքանչյուր տարվա համար վերապատրաստումների ժամանակացույցի սահմանում:

ՄԱԿ-ի վերոնշյալ ստանդարտ կանոնների համաձայն վերապատրաստման նպատակը պետք է անձնակազմին իր պարտավորությունները հստակեցնելը լինի՝ հանցագործին վերահսկողություն, նրա իրավունքները պաշտպանելու և հասարակության անվտանգությունը ապահովելու շեշտադրմամբ:

Աշխատանքի անցնելուց առաջ պրոբացիոն ծառայության յուրաքանչյուր աշխատակից պետք է ցուցումներ ստանա ազատագրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ, ծանոթանա պրոբացիոն վերահսկողությանը և նման միջոցների իրականացմանը:

Աշխատանքի անցնելուց հետո յուրաքանչյուր աշխատակից պետք է պարբերաբար բարելավի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ ծառայության ընթացքում հատուկ վերապատրաստումներ անցնելով:

Վերապատրաստումները, մասնավորապես, պետք է ուղղված լինեն հետևյալին՝

- գործառույթներից բխող և անհրաժեշտ կարողությունների զարգացմանը,
- վարքագծային, միջանձնային հաղորդակցության կարողությունների զարգացմանը,
- վերլուծական կարողությունների զարգացմանը,
- տեխնիկական կարողություններին:

Վերապատրաստումների մեկ այլ շարք պետք է ուղղված լինի հետևյալին՝

- էթիկայի կանոնների ուսուցանում,
- համապատասխան օրենքների և նորմատիվ ակտերի ծանոթացում,
- մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի ստանդարտ նվազագույն կանոնների ուսուցանում,
- անձնական շահի և արտոնությունների հետ կապված հարցեր,
- անկուսակցական վարքագիծ,
- նվերների և շահույթի ստացման արգելք,
- ջանասիրություն պարտականությունների կատարման հարցում,



- խտրականության արգելքի վերաբերյալ մինիմալ գիտելիքներ,
- շահառուների հետ մասնագիտական և անձնական հարաբերությունների ձևավորում,
- գործառույթային գնահատում,
- տուժողի իրավունքներ,
- հանցագործի իրավունքների և պարտականությունների ուսուցանում:

**Առաջարկ:** Այս կապակցությամբ առաջարկվում է մինչ մեկնարկային ծրագրերը սկսելը հասարակության լայն մասշտաբների պարբերաբար լուսաբանել պրոբացիոն ծառայության ու դրա առավելությունների մասին: Մշակել երկարաժամկետ և կարճաժամկետ վերապատրաստման ծրագրեր պրոբացիոն ծառայողների համար և վերապատրաստումները սկսել պրոբացիոն ծառայության հիմնադրումից առաջ և դրա ընթացքում:

Համալսարանական մակարդակում խորացնել պրոբացիոն ծառայության ուղղվածությամբ հատուկ մեթոդոլոգիայով կուրսերի մշակումը, օրինակ սոցիոլոգների, հոգեբանների և սոցիալական աշխատողների համար: Կուրսերին հաճախողներին հնարավորություն տալ սովորելու ընթացքում որպես կամավոր հանդես գալ պրոբացիոն ծառայողների օգնականներ, իսկ ուսման ավարտին նրանք հնարավորություն կստանան դառնալ պրոբացիոն ծառայողներ: Նման կերպ հիմնադրվող պրոբացիոն ծառայությունը համալրված կլինի քրեակատարողական ոլորտի փորձառու մասնագետներով և երիտասարդ, հատուկ գիտելիքներ ունեցող մասնագետներով:

### **Ստեղծվող ազգային տեղեկատվական համակարգը**

Հայեցակարգի համաձայն՝ պրոբացիոն գործառույթների իրականացման արդյունավետ մոնիթորինգի եղանակներից է **ազգային տեղեկատվական համակարգի կազմակերպումն ու ցանցի հիմնադրումը:** Տեղեկատվական նման համակարգի միջոցով կառավարումը կարող է հիմնվել շահառուների վերաբերյալ սեղմ ժամկետներում տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու համակարգչային եղանակի վրա, այնպես, որ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի վերջում ՀՀ արդարադատության նախարարության տվյալների բազան թարմացված լինի և հիմք հանդիսանա պրոբացիոն քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելու և պրոբացիայի ծառայությունը կառավարելու համար: Նման կերպ հնարավոր կլինի վերահսկել ու գնահատել նաև պրոբացիոն աշխատանքների շարժն ու դրանց արդյունավետությունը: Եվ վերջապես, սա կոնկրետ գործի վարման արդյունավետության երաշխիքներից մեկը կհանդիսանա:

Ներկա փուլում անհասկանալի է, սակայն, նման տեղեկատվական բազայի գործարկման մեխանիզմը, պահվող տեղեկատվության բնույթն ու իրավասու մարմիններին հասանելի դարձնելու եղանակները: Անպատասխան է մտնում այն հարցը, թե ում է հասանելի լինելու տեղեկությունը, միայն պրոբացիոն ծառայողին, թե պրոբացիոն ծառայության հետ միասին նաև ոստիկանությանը, քննչական մարմիններին, դատախազությանն ու դատարաններին: Այն դեպքում, երբ տեղեկությունը պրոբացիոն ծառայողից բացի հասանելի դառնա նաև քրեական գործում ներգրավված այլ մարմինների, խիստ կկարևորվի տեղեկության օգտագործման և տարածման կանոնների պահպանումը, քանի որ սխալ պլանավորման ու օգտագործման դեպքում հնարավոր է տեղեկատվության արտահոսք ունենալ, ինչը կխախտի տվյալ անձի մի շարք իրավունքները/ օրինակ, անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը/: Մյուս կողմից, քրեական արդարադատության ոլորտում տվյալների ու տեղեկատվության միասնական բազա ունենալը կհեշտացնի ու կարագացնի այդ ոլորտում ընդգրկված բոլոր մարմինների աշխատանքն ու արդյունավետության երաշխիք կհանդիսանա: Նման բազա ստեղծելը, սակայն, կապված է ֆինանսական լուրջ միջոցների

հետ, ինչով պայմանավորված էլ հեշտությամբ իրականացվել չի կարող:

### **Միջազգային փորձ**

Եվրոպական երկրներում պրոբացիոն ծառայության ներդրումից ի վեր տեղի ունեցած ամենակարևոր զարգացումներից մեկը վերաբերվում է պրոբացիոն ծառայության գործողությունների և պրոբացիայի տակ գտնվող անձանց գրանցման և գործերի վարման համակարգերի ձևավորմանը:

Ֆինլանդիայում և Յուլանդիայում օրինակ ստեղծվել են ամբողջ երկրի տարածքում գործող տեղեկատվական համակարգեր, որոնք տեղեկատվություն են պարունակում համայնքային բնույթի բոլոր պատժատեսակների մասով: Բացի փորձագետների հայտարարություններից և քրեական մարմինների կողմից ընդունված որոշումների փաստաթղթերից, այստեղ հնարավոր է գտնել գնահատման և պլանավորման համար անհրաժեշտ վիճակագրություն և այլ տեղեկատվություն: Ավստրիայում ստեղծվել է համակարգչային էլեկտրոնային բազա, որտեղ պահվում է տեղեկատվություն պրոբացիայի տակ գտնվող անձանց վերաբերյալ: Տեղեկությունը թարմացվում է շաբաթվա կամ նույնիսկ օրվա կտրվածքով: Դանիայում Պրոբացիայի տակ գտնվող յուրաքանչյուր իրավախախտի վերաբերյալ պահվում է գործի համակարգչային կրիչ, որին համակարգի ցանկացած մարմին հասանելիություն ունի գործի ցանկացած փոփոխության կամ իրավախախտի հետ կապված ցանկացած փոփոխության դեպքում: Շվեդիայում առկա է ողջ երկրի համար գործող մեկ տեղեկատվական համակարգ, որտեղ հնարավոր է գտնել անձնական և գործի վերաբերյալ տվյալներ<sup>20</sup>:

Յուրաքանչյուր դեպքում հավաքվող և պահպանվող տեղեկությունը օգտագործվում է կազմակերպչական նպատակներով: Տեղեկությունը ենթակա է պաշտպանության և դրանից օգտվելը սահմանափակ բնույթ է կրում՝ կոնկրետ մարմիններ և կոնկրետ նպատակով կարող են հասանելիություն ունենալ: Որպես կանոն, սակայն, հավաքված տեղեկությունը ընդհանրական կարգով վերլուծության է ենթարկվում տարեկան զեկույցներում և հասանելի դառնում հանրության համար:

**ԱՌԱՋԱՐԿ:** Ելնելով միջազգային լավագույն փորձից՝ խորհուրդ է տրվում ստեղծել ամբողջ հանրապետության տարածքով անձանց վերաբերյալ պրոբացիոն տվյալների էլեկտրոնային համակարգեր, որոնք կպարունակեն նշանակված սանկցիայի և անձի վերաբերյալ ցանկացած ինֆորմացիա, ներառյալ վերջին իրադարձությունները: Նման կերպ հնարավոր կլինի ապահովել նաև մարզային պրոբացիոն ծառայությունների/մասնաճյուղերի կողմից պրոբացիայի տակ գտնվող անձի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն ստանալը՝ արագ և հեշտ եղանակով: Ինֆորմացիայի սահմանափակումը խստացված կլինի հասարակության համար, սակայն հասանելիության առումով ավելի բաց պետք է լինի պետական համապատասխան գերատեսչությունների համար և հատկապես քրեական դատավարությանը ներգրավված մարմիններին:

### **Մինչդատական զեկույցներ**

Հայեցակարգով նախատեսված մինչդատական զեկույցները պետք է տրամադրվեն այն գործերով, որոնց դեպքում վարույթն իրականացնող մարմինը պատրաստվում է դիմել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց նշանակելու միջնորդությամբ: Այն պարտադիր բնույթ է կրում անչափահասների գործերով: Մինչդատական զեկույցը տրվում

<sup>20</sup> Anton M. van Kalmthout, Ioan Durnescu. European Probation Service Systems, A Comparative overview, available at [http://www.cepprobation.org/uploaded\\_files/1\\_chapter\\_1\\_comparative\\_overview.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/1_chapter_1_comparative_overview.pdf)

Է դատարանի պահանջով, որի նպատակը դատավորի կողմից որոշում կայացնելուց առաջ հանցագործություն կատարած անձի մասին տեղեկություն ունենալն է, ինչն էլ հաշվի է առնվում որոշում կայացնելիս:

Դատարանի պահանջով զեկույց ներկայացնելու դրույթը մտահոգող է. նախ սահմանված է, որ զեկույցը պետք է տրվի, եթե վարույթն իրականացնող մարմինը կալանավորման միջնորդությամբ պատրաստվում է դիմել դատարան, այնուհետ նշվում է, որ զեկույցը տրվում է դատարանի պահանջով: Ստացվում է, որ եթե ինչ-որ գործով դատարանը զեկույց չպահանջի, ապա վարույթն իրականացնող մարմինը մինչդատական զեկույց ներկայացնելու պարտավորություն չի կրի և կալանավորման հարցը կորոշվի նախկինի նման:

Առանձին մասնագետներ նշել են, որ մեր երկրում պրոբացիոն ծառայության կենտրոնական գործառույթներից մեկը զեկույցներն են լինելու, որոնք ուղղված կլինեն դատարանների կողմից ճիշտ որոշումներ կայացնելուն: Խոսքը վերաբերվում է մասնավորապես կալանքի որոշումներին, որոնց նվազման հավանականությունը կապվում է մանրակրկիտ և արդյունավետ տեղեկություն պարունակող մինչդատական զեկույցի հետ, որը ունակ կլինի ազատագրված ձևով խափանման միջոցին այլընտրանք առաջարկել: Սակայն առաջարկվել է տարբերակել խափանման միջոցի ընտրման վերաբերյալ ներկայացվող մինչդատական զեկույցները մնացած փուլերում ներկայացվող զեկույցներից: Առաջին դեպքում զեկույցները նպատակահարմար կլինի ներկայացնել միայն դատավորի և դատախազի պահանջով: Մնացած դեպքերում արդեն պետք է ընդլայնել զեկույցներ պահանջելու իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկը և նման հնարավորություն մեղադրյալին և տուժողին նույնպես տալ:

Մտավախություն է արտահայտվել զեկույցների խորհրդատվական բնույթի վերաբերյալ, որի արդյունքում դատավորը կաշկանդված չի լինի ընդունել այն, և կշարունակվի որոշում կայացնելու ներկայիս պրակտիկան:

### **Միջազգային փորձ**

Սահմանված մոտեցման համաձայն պրոբացիոն ծառայողներն իրենց գործառույթներն իրականացնելիս զեկույցի տեսքով տեղեկություն են ներկայացնում դատարաններին: Չեկույցները պետք է բխեն ինչպես հանցանք կատարելու մեջ կասկածվող անձի, այնպես էլ տուժողի շահերից: Չեկույցները, ըստ եռության, տվյալներ են պարունակում անձի վարքագծի, դրա փոփոխման հավանականության, հանցավոր անցյալի, անձնական հարաբերությունների, զբաղվածության, մասնագիտության և այլնի վերաբերյալ, ինչը կարող է դատարանի կողմից որոշում կայացնելիս դեր ունենալ<sup>21</sup>: Այդ իսկ պատճառով զեկույցում ներկայացվում է նաև երաշխավորագիր կամ առաջարկություն՝ խափանման միջոցի կամ պատժի առավել արդյունավետ ընտրության վերաբերյալ: Չեկույցներին պարտադիր ներկայացվող պայմաններն են իրականության արտացոլման օբյեկտիվությունն ու անկողմնակալությունը:

**Առաջարկ:** Առաջարկվում է **կալանավորման հարցերով** վարույթն իրականացնող մարմնի և պրոբացիոն աշխատակցի համար մինչդատական զեկույց ներկայացնելը դարձնել պարտադիր: Դատարանի հետ մեկտեղ դատախազությանը նույնպես օժտել մինչդատական զեկույց պահանջելու իրավասությամբ: Ավելին, պաշտպանության կողմին նույնպես հնարավորություն տալ դիմել դատարան՝ պրոբացիոն ծառայողից մինչդատական զեկույց պահանջելու միջնորդությամբ:

<sup>21</sup> UN Standard Minimum Rules for Non-Custodial Measures, Adopted by General Assembly resolution 45/110 of 14 December 1990

## Մեդիացիայի վերաբերյալ

Հայեցակարգի՝ դատական փուլում պրոբացիայի բնութագրի համաձայն *“մեր երկրում մեդիացիան կարող է դիտվել որպես դատական փուլում իրականացվող գործառույթ”*: Այսինքն՝ արտադատական կարգով խնդիրների կարգավորման այս ինստիտուտի ամբողջ եռությունը դառնում է ոչ կիրառելի և անհասկանալի է, թե դատական փուլում ինչպիսի հարցերի լուծմանն է այն ուղղված լինելու և որն է լինելու դատական փուլում մեդիացիա կիրառելու արդյունավետությունը:

Փորձագետները գտնում են, որ նման կարգավորման թերությունը գալիս է ներկայիս Քրեական օրենսգրքից, որտեղ հաշտեցումը նախատեսված է դատական փուլում: Ինչը կրկին սխալ է և ցանկալի կլիներ, որ մեդիացիան նախատեսված լիներ մինչդատական փուլում: Մինչդեռ, քրեական օրենսգրքի սխալ կարգավորումը տեղափոխվում է պրոբացիոն հայեցակարգ:

## Միջազգային փորձ

Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ մեդիացիան նախատեսված է որպես մինչդատական փուլում իրականացվող գործառույթ: Ինչպես և նշվել է, մեդիացիայի ինստիտուտը նպատակ է հետապնդում մասնավոր մեղադրանքի գործերով վեճերի լուծումը հեռու պահել դատարաններից և դրանց տալ արտադատական լուծում:

Մեդիացիան վերականգնողական արդարադատության ամենահին եղանակներից մեկն է<sup>22</sup>: Արևմտյան Եվրոպայի երկրները, որոնք ներդրել են քրեական գործերով մեդիացիան, այն օգտագործում են որպես գործի արտադատական լուծման արդյունավետ եղանակ, որի պարագայում կողմերը զերծ են մնում դատական գործընթացներից, սակայն հաշվի են առնվում և լուծվում ինչպես տուժողի, այնպես էլ պաշտպանության կողմի շահերը: Մեդիացիայի եռությունը կայանում է նրանում, որ տուժողն ու հանցագործություն կատարած անձը իրենց կամքի ազատ արտահայտմամբ հատուկ ընտրված միջնորդի օգնությամբ լուծեն կատարված հանցանքի հետ կապված հարցերը՝ առանց դատարան հասնելու: Մեդիացիայի ընթացքում կողմերի միջև ընթացող քննարկումներն ու ցանկացած համաձայնությունն պետք է հիմնվի գաղտնիության սկզբունքի վրա: Այսինքն, մինչդատական վարույթում մեդիացիա կիրառելու հիմնական նպատակը գործին արտադատական լուծում տալն է:

**Առաջարկ:** Կարևորելով մեդիացիայի ինստիտուտի դերն ու դրա նպատակային նշանակությունը՝ առաջարկվում է այն նախատեսել հատկապես որպես մինչդատական վարույթի գործառույթ և ներառել մինչդատական փուլի պրոբացիայի աշխատանքների մեջ: Սա մի կողմից կթեթևացնի դատարանների ծանրաբեռնվածությունը, մյուս կողմից տուժողին և ամբաստանյալին զերծ կպահի դատական գործընթացներից, իսկ քրեական գործով որոշումը ավելի արագ և ավելի հեշտ կկայացվի:

## Պրոբացիոն ծառայողների ամենօրյա գործառույթներն ու դրանց օրենսդրական ամրագրումը

Օրենսդրական հիմքերի առումով նախատեսված է, որ “Պրոբացիոն ծառայության մասին” ՀՀ օրենքով պետք է հստակ սահմանվեն ծառայության խնդիրները, գործունեության սկզբունքները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիայի ծառայության ծառայողի իրավական և սոցիական ապահովման պետական երաշխիքները, նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և գործունեության վերահսկման կարգը, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ իրավահարաբերությունները:

<sup>22</sup> UN Office on Drugs and Crime, Handbook on Restorative Justice Programmes

Հայաստանի Հանրապետությունում ներդրվող պրոբացիոն ծառայության շրջանակներում պրոբացիոն ծառայողի ամենօրյա գործառնությունները պետք է ներառեն հսկողության իրականացումը, զեկույցների պատրաստումն ու դատապարտյալի հետ աշխատանքի պրոգրեսի ու արդյունավետության գնահատումը: Գործառնությունները հնարավոր կլինի ընդլայնել ժամանակի ընթացքում, երբ կատարված աշխատանքների որոշակի փորձ կլինի:

Որոշ մասնագետներ գտնում են, որ պրոբացիոն ծառայողի գործառնությունները պետք է սահմանվեն միայն առանձին իրավական ակտով, օրինակ՝ Պրոբացիոն ծառայության մասին օրենքը: Մեկ այլ խումբ մասնագետների կարծիքով գործառնությունները պետք է նախատեսվեն ինչպես քրեակատարողական օրենսգրքով, այնպես էլ առանձին իրավական ակտերով:

### **Միջազգային փորձ**

Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պրոբացիոն ծառայողների ամենօրյա գործառնությունները, որոնք իրենցում կարող են ներառել վերահսկողության տարրեր /օրինակ մասնակի ազատությունը, տնային կալանք, հսկողությամբ բանտից արձակուրդ, համայնքային աշխատանք և այլն/ կամ առանց վերահսկողության գործողություններ /զեկույցների պատրաստում, վերականգնողական աշխատանքների վարում, տուժողներին օգնություն, մինչդատական զեկույցների պատրաստում, ազատումից առաջ աշխատանքներ և այլն/ նախատեսվում են առանձին ակտերով, որոնք կարող են լինել նախարարական կանոնակարգեր, հրամանագրեր կամ շրջաբերականներ: Այսինքն, կոնկրետ ֆունկցիաները կարգավորում են ստանում առանձին իրավական ակտերով, ինչը ապահովում է տվյալ գործառնության հստակությունն ու համալիրությունը: Ավելին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ առանձին ֆունկցիաներ հնարավոր է դելեգացնել հասարակական կազմակերպություններին, ապա նման ֆունկցիաների իրականացման նախատեսումը պետք է հստակ կարգավորում ստանա, ինչը պետք է պրոբացիոն ծառայության իրականացման նախնական փուլում արդեն գոյություն ունենա:

**Առաջարկ:** Պրոբացիոն աշխատակցի ամենօրյա գործառնությունները, դրանց իրականացման հնարավոր եղանակները, համագործակցությունը, լիազորություններն ու մնացած ադմինիստրատիվ հարցերը, ՀԿ-ներին դելեգացնելու ձևերն ու համագործակցությունը «Պրոբացիոն ծառայության մասին օրենքից» զատ նախատեսել նաև առանձին իրավական ակտերով /կառավարության որոշում, ԱՆ հրաման, Քրեակատարողական օրենսգրք/:

### **Պրոբացիոն ծառայության գործառնությունները չորս փուլերում իրականացնելը**

Պրոբացիոն ծառայության քննարկվող հայեցակարգը սկզբնական շրջանում նախատեսում էր ծառայության գործառնությունների իրականացումը բոլոր 4 փուլերում՝ մինչդատական, դատական, պենիտենցիար և հետպենիտենցիար: Փոփոխությունների արդյունքում հստակեցվեց, որ պրոբացիոն ծառայությունը ներդրվելու է փուլային կարգով՝ առաջնահերթություն տալով երկու հիմնական փուլերի: Սակայն, քանի դեռ հայեցակարգը հաստատված չէ, պարզ չէ, թե որ փուլերից է սկսվելու կիրառվել պրոբացիոն ծառայությունը:

Բոլոր 4 փուլերում պրոբացիոն ծառայության նախատեսումը մի կողմից ողջունելի է, մյուս կողմից մտահոգության տեղիք է տալիս մի շարք պատճառներով: Նախ, կրկին անհասկանալի է պրոբացիոն ծառայողների դերերի բաշխումը բոլոր 4 փուլերի համար: Այնուհետ, դեռևս անպատասխան է մնում առկա մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը բոլոր 4 փուլերի համար:

Պենիտենցիար փուլում պրոբացիոն ծառայության կարևոր գործառույթ է դիտարկվում, ի թիվս այլոց, դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննելու դեպքում այդ անձի վերաբերյալ զեկույցների, սոցիալական-հոգեբանական բնութագրերի ներկայացումը, որը պետք է ներառի նվազագույնը՝ այդ դատապարտյալի և նրա վարքի եզրակացությունը, գնահատի կրկնահանգագործության ռիսկը, կատարվող սոցիալական, հոգեբանական, իավական աշխատանքների արդյունավետությունը, անհրաժեշտ վերահսկողական միջոցները, ակտիվային կամ թմրա-կյութերից կախվածության առումով որոշակի կուրսեր անցնելու հնարավորությունը:

Պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը ներկայումս կենտրոնական հարցեր են, որոնք բարելավման և պրակտիկայում ավելի հաճախ կիրառվելու կարիք ունեն: Մտահոգության տեղիք է տալիս սակայն այն, թե արդյոք պրոբացիոն ծառայության աշխատակիցները ի վիճակի կլինեն ժամանակային և այլ գործոնների առումով համատեղել պենիտենցիար փուլում որոշակի խումբ դատապարտյալների նկատմամբ այս կարևոր ֆունկցիաների կատարումը և միևնույն ժամանակ այլ փուլերում համապատասխան գործառույթների կատարումը:

Հարցի կապակցությամբ ստացված փորձագիտական կարծիքները հակասական են: Որոշ մասնագետներ գտնում են, որ անհրաժեշտ է սկզբնական շրջանում պրոբացիոն ծառայությունը նախատեսել երկու հիմնական փուլերի համար, հետագայում ընդլայնել և հնարավոր դարձնել բոլոր 4 փուլերի համար: Մեկ այլ խումբ, ընդհակառակը, գտնում է, որ անհրաժեշտ է բոլոր 4 փուլերում պրոբացիոն ծառայություն նախատեսել, քանի որ եթե ի սկզբանե չնախատեսվի, հետագայում շատ ավելի բարդ կլինի փուլային առումով գործառույթներն ու ինքնին փուլերը ընդլայնել:

Հետաքրքիր պատկեր է ստացվել նաև առաջնահերթ համարվող փուլերի վերաբերյալ: Մասնագետների մի մասը գտնում է, որ սկզբնական շրջանում միևնույն փուլը պետք է դուրս մնա և առաջնահերթություն պետք է տալ պենիտենցիար և հետպենիտենցիար փուլերին՝ կարևորելով պայմանական վաղաժամկետ ազատման ու անձին ազատության նախապատրաստելու հարցը: Այս խմբի կողմից նշվել է նաև, որ եթե միևնույն փուլում պրոբացիա կիրառվի, այն, հնարավոր է դատարանի համար կաշկանդող դառնա և արդյունավետ չլինի:

Ի տարբերություն այս մտեցման, մասնագետների մեկ այլ խումբ գտնում է, որ հենց միևնույն փուլից պետք է սկսել պրոբացիոն ծառայությունը՝ կալանքի հարցի լուծման ժամանակ դատարաններին օգնելու և ավելի արդյունավետ խափանման միջոց ընտրելու նպատակով: Նշվել է նաև, որ եթե պենիտենցիար փուլում պրոբացիա կիրառվի և այն կապվի պայմանական վաղաժամկետ ազատման հետ, կոռուպցիոն ռիսկերը մեծ կլինեն և կրկին արդյունավետությունը կնվազի:

### **Միջազգային փորձ**

Առանձին երկրներում պրոբացիոն ծառայության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ ընդհանուր և բոլորի կողմից ընդունված մոդել գոյություն չունի: Սակայն կան պրոբացիոն ծառայության մի քանի մոդելներ, որոնք որոշ տարբերություններով և առանձնահատկություններով հնարավոր է հանդիպել մեկից ավելի երկրների իրավական համակարգերում: Այսպես, ինչպես արդեն ներկայացվել է, պրոբացիոն ծառայությունը հիմնականում գործում է կամ գործադիր կամ դատական իշխանության ներքո: Սրանով պայմանավորված՝ ծառայության կողմից իրականացվող ֆունկցիաները կարող են տարբեր

լինել: Այն երկրները, որտեղ պրոբացիոն ծառայությունը գործում է բանտային համակարգի ներսում, պրոբացիոն ծառայությունները հիմնականում իրականացվում են պատժի կրման երբեմն դատական փուլերում: Այսինքն, մինչդատական փուլում և ազատվելուց հետո պրոբացիոն ծառայությունը ավելի պասիվ է: Նման մոդել գործում է օրինակ Ֆրանսիայում<sup>23</sup>:

Արդարադատության նախարարության ներքո ստեղծված լրիվ անկախ ու ինքնուրույն պրոբացիոն ծառայության օրինակ է հանդիսանում Մոլդովան: Այստեղ, ինչպես նախատեսված է ՀՀ-ում, պրոբացիոն գործառույթները իրականացվում են նախարարության կողմից վերահսկվող առանձին մարմնի կողմից: Հատկանշական է, որ Մոլդովայում պրոբացիոն ծառայությունը ֆունկցիաներ իրականացնում է բոլոր 4 փուլերում, սակայն առավել ակտիվ է **դատավարության և վճռի կատարման փուլում**: Այս երկու փուլերում իրականացվում է մասնավորապես՝ վերահսկողություն, թմրամիջոց կամ ալկոհոլ օգտագործող անձանց հետ հատուկ ծրագրերի իրականացում, նշանակված տուգանքների որոշումների կատարում, հանրային աշխատանքներ, վճռի կասեցում, պայմանական դատապարտում, պատժի կրումից վաղաժամկետ ազատում, ներում իրականացնելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցի ներկայացում և այլն: Սակայն դատապարտյալի ազատվելուց հետո նույնպես պրոբացիոն ծառայությունը որոշ գործառույթներ ունի: Ինչը ներառում է վերահսկողության և աջակցության տարրեր: Այսինքն, այս մոդելի և կոնկրետ Մոլդովայի պարագայում պրոբացիոն ծառայության ֆունկցիաները ներառում են բոլոր 4 փուլերը, սակայն կարևորություն և կենտրոնացվածություն հատկացվում է դատական քննության և վճռի կատարման/պատժի կրման փուլերին:

**Առաջարկ:** Բոլոր 4 փուլերում պրոբացիոն ծառայություն նախատեսելը խրախուսելի է և ողջունելի է, ինչը սակայն պետք է արդարացված լինի առկա ռեսուրսների և կարողությունների առումով: Այդ իսկ պատճառով առաջարկվում է այն նախատեսել 2 հիմնական փուլերի համար, ինչը կընտրվի հաշվի առնելով ներկայումս առավել հրատապ լուծում պահանջող հարցերը: Օրինակ կալանքի որոշումների կայացման հարցում դատարաններին լրացուցիչ տեղեկություն տրամադրելու կամ պատժի կրումից վաղաժամկետ ազատելու հարցում որոշում կայացնելիս, ինչը բնորոշ է մինչդատական և պատժի կրման փուլերին: Միևնույն ժամանակ, չպետք է բացառել այլ փուլերում նույնպես որոշակի գործառույթներ իրականացնելու հնարավորությունը, ինչը հիմք կհանդիսանա հետագայում փուլերը ընդլայնելու համար:

## **Պրոբացիոն ծառայության կիրառումը ըստ հանցագործությունների տեսակների**

Հայեցակարգը որևէ նշում չի պարունակում այն մասին, թե որ տեսակի հանցագործությունների համար է նախատեսվում պրոբացիոն ծառայությունը: Ինչը նշանակում է, որ բոլոր հանցագործությունների դեպքում /ոչ մեծ ծանրության, միջին, ծանր և առանձնապես ծանր/ հանցագործությունների պրոբացիան կգործի: Նման անխտրական մոտեցումը հանցանք կատարած անձանց իրավունքների և շահերի պաշտպանության լավագույն դրսևորումներից մեկն է: Օրինակ, ըստ ծանրության աստիճանի տարանջատման բոլոր հանցագործությունների պարագայում էլ հնարավոր է զեկույցներ ներկայացնել: Քանի որ զեկույցներ ներկայացնելը խնդրահարույց չէ և հնարավոր է այդ եղանակով նույնիսկ առանձնապես ծանր հանցագործությունների նկատմամբ պրոբացիա կիրառել: Նման մոտեցումը հիմնավորվել է այն փաստարկով, որ չնայած հանցագործությունների ռիսկայնության աստիճանները տարբեր են, այնուհանդերձ, հնարավոր չէ պնդել, որ սպանության համար դատապարտված անձի ռիսկայնության աստիճանը ավելի բարձր է,

<sup>23</sup> Summary Information on Probation in France, European Organization for Probation

քան խարդախության կամ հափշտակության համար դատապարտված անձի:

Մինևույն ժամանակ, պետք է ելնել նաև այն կանխավարկածից, որ որոշ հանցագործությունների և հանցագործների պարագայում պրոբացիոն ծառայությունը ի վիճակի չի լինի կատարել իր ֆունկցիաները: Այսինքն, ըստ հանցագործությունների տեսակների պրոբացիա կիրառելու հարցում անհրաժեշտ է ընդհանուր կանոնից բացառություններ կատարելու հնարավորություն նախատեսել:

### **Էլեկտրոնային մոնիթորինգ**

Պրոբացիոն ծառայության հայեցակարգով նախատեսված է, որ «Ծառայության գործունեության ամբողջականացման փուլում (2016 թվականի հունվարից սկսած) նախատեսվում է կյանքի կոչել այն լիազորությունների իրականացումը, որոնք հնարավոր չի եղել իրականացնել ծառայության ստեղծման փուլում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Էլեկտրոնային վերահսկողությանը (մոնիթորինգ), ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հնարավոր ավելի ուշ գործողության մեջ դնելու հետ կապված չիրականացված լիազորություններ: Հնարավոր տարբերակներից է նաև այն, որ Էլեկտրոնային մոնիթորինգի ծառայության համար վճարելու (ամբողջությամբ կամ մասնակի) է իրավախախտում կատարած անձը (ծախսը մեկ անձի հաշվարկով օրական կազմելու է մոտավորապես 2000 ՀՀ դրամ): Վճարումը կատարվելու է դատարանում՝ խափանման միջոցը ընտրելուց առաջ, եթե իրավախախտը համաձայն է, որ իր նկատմամբ կիրառվի Էլեկտրոնային մոնիթորինգ»:

Էլեկտրոնային մոնիթորինգի նման եղանակով իրականացման կարգը անընդունելի է այն պատճառաբանությամբ, որ հանցանք կատարած անձանցից քչերը կհամաձայնվեն ծառայության միջոցների համար վճարել: Հաշվի առնելով ներկայիս սոցիալական պայմաններն ու հանցանք կատարող անձանց ընդհանուր սոցիալական կարգավիճակը, մտավախություն կա, որ իրավախախտների մեծամասնությունը հնարավորություն չի ունենա օգտվել Էլեկտրոնային մոնիթորինգից և կրկին կուղարկվի ՔԿՅ՝ պատիժ կրելու: Ավելին, ներկայումս ՀՀ-ում հանցագործությունների կատարմանը նպաստող պայմաններից առաջինը սոցիալական անբավարար ապահովությունն է, ինչը հանդես է գալիս այլ գործոնների հետ համակցությամբ<sup>24</sup>: Նման պայմաններում անձը, ով հանցանք է կատարել սոցիալական վիճակի պատճառով, դժվար թե ի վիճակի լինի Էլեկտրոնային մոնիթորինգի յուրաքանչյուր օրվա համար 2000 ՀՀ դրամ վճարել: Ավելին, մտավախություն կա, որ նման կերպ վերահսկողությունը միայն առանձին անձանց համար կօգտվի՝ անհավասար պայմաններում:

**Առաջարկ:** Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էլեկտրոնային մոնիթորինգի իրականացումը ապահովել պետության միջոցների հաշվին:

<sup>24</sup> Հայաստանում հանցավորությանը և կրկնահանցագործությանը նպաստող գործոնների քանակական և որակական հետազոտություն, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի ՀԿ, 2014, հասանելի է <http://hra.am/hy/point-of-view/2014/05/22/reoffending> հասցեով



## Եզրակացություն

Վերը ներկայացվածը թույլ է տալիս կրկին փաստել, որ պրոբացիոն ծառայության հայեցակարգը դեռևս խնդրահարույց է իր կարգավորումներով, ավելին, առկա են բացթողումներ, որոնք հետագայում բացասական ազդեցություն կունենան դրա պրակտիկ կիրառելիության վրա:

Միևնույն ժամանակ, խնդրահարույց է դիտարկվում նաև կոնկրետ քայլեր ձեռնարկելու և պրոբացիոն հայեցակարգը կյանքի կոչելու հարցը: Ինչպես նշվել է, պրոբացիան մեր երկրում կիրառելի դարձնելու հարցում նկատելի է քաղաքական կամքի բացակայություն: Օրենքները և իրավական ակտերը ընդունելու գործընթացը դանդաղ է և դեռևս հստակ չէ, թե կոնկրետ ինչ իրավական ակտեր են ընդունվելու և ինչ ժամկետներում, որոնց հիման վրա կգործարկվի պրոբացիոն ծառայությունը: Թերևս սա էր այն հիմնական հարցը, որը խոչընդոտեց նաև դեռևս 2014թ-ի գարնանը պլանավորված պիլոտային ծրագրերի իրականացմանը:

Ներկայումս պրոբացիոն ծառայության հետ կապված ցանկացած գործողություն ուղղակի կապի մեջ է դիտարկվում համապատասխան իրավական ակտերը ընդունելու հետ: Սա, ինչ խոսք, օրինականության ապահովման տեսանկյունից ընդունելի է, քանի որ պրոբացիան կհիմնվի կոնկրետ և վստահելի հիմքերի վրա: Սակայն, հաշվի առնելով այն տեմպերը, որոնք առկա են այդ իրավական ակտերը ընդունելու կապակցությամբ, խիստ կասկածի տակ է դրվում երբևէ այն պրակտիկայում կիրառելի դարձնելու հավանականությունը:

Չնայած նշված կարևոր խնդրին, որի լուծմանը, այնուհանդերձ, լավատեսությամբ ենք վերաբերվում, կարևորում ենք նաև ուսումնասիրության մեջ ներկայացված հարցերի հրատապ վերանայումն ու փոփոխությունը՝ ուսումնասիրության մեջ բարձրացված 11 հարցերին պատշաճ ուշադրություն դարձնելու և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը գնահատելու միջոցով:

Մինչ հայեցակարգի հաստատվելն ու քրեական օրենսգրքի նախագծի հայեցակարգի հաստատվելը, պետք է ապահովել այդ երկու փաստաթղթերի հնարավորինս համաձայնեցվածությունը:

Շարունակում է առաջնահերթ մնալ ապագա պրոբացիոն ծառայողների անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ապահովման հարցը, ինչի համար այս փուլում արդեն պետք է իրականացվեն համապատասխան նախապատրաստական աշխատանքներ՝ վերապատրաստումների, կադրերի ճիշտ ընտրության և այլ գործողությունների միջոցով: Պրոբացիոն ծառայության և առհասարակ վերականգնողական արդարադատության կոնցեպտի վերաբերյալ վերապատրաստումները ողջունելի կլինեն նաև գործող դատավորների, դատախազների և քննիչների համար, ովքեր պրոբացիոն հայեցակարգն ընդունվելուց հետո պետք է առնչություն ունենան վերջինիս հետ: Իսկ այդ վերապատրաստումները քրեական գործի վարույթում ներգրավված մարմինների ֆունկցիաները արդյունավետ իրականացնելու գրավական կհանդիսանան:

Միևնույն ժամանակ, մտահոգության տեղիք է տալիս քրեական արդարադատության իրականացման այն փուլերի ընտրության հարցը, որոնց շրջանակներում պրոբացիոն ծառայությունը կիրառելի կլինի: Թերևս այս հարցի ճիշտ լուծումը ունակ կլինի ներկայումս կենտրոնական խնդիր համարվող՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման և կալանավորման հարցերի՝ արդյունավետ լուծման եղանակ հանդիսանալ: Նմանապես,

դեռևս այս փուլում պետք է հստակեցնել և միմյանցից տարանջատել մեր երկրում պրոբացիոն ծառայության առջև դրվող հիմնական նպատակներն ու խնդիրները: Պրոբացիոն ծառայությունը շատ հաճախ ընկալվում է որպես ՀՀ քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության լուծման լավագույն եղանակը: Սակայն պետք է ընդունել, որ բանտերի բեռնաթափումը պրոբացիոն ծառայության հիմնական նպատակը չէ, այլ պրոբացիոն ծառայության արդյունավետ գործունեության արդյունք:

Վերջնական առումով քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներն ու պրոբացիոն ծառայության ներդրումը պետք է ապահովեն մեր երկրում վերականգնողական արդարադատության անցումը, որի պարագայում մենք կունենանք ոչ թե արարքակենտրոն քրեական արդարադատության, այլ անձակենտրոն, ինչը ուշադրություն կդարձնի կոնկրետ հանցագործության սուբյեկտին և այն սոցիալական պայմաններին ու հանգամանքներին, որոնց ամբողջության մեջ տեղի է ունեցել հանցագործությունը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հալաբյան 41<sup>ա</sup>, հեռ.380-240,  
էլ. փոստ [suren.krmoyan@justice.com](mailto:suren.krmoyan@justice.com)

№ 04/16/2163-15  
«02» 03 2015թ.

**«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ՀԱՅԿՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան Ձեր 2015թ. փետրվարի 11-ի գրության՝ հայտնում եմ, որ 2013 թվականին ՀՀ կառավարության կողմից չի ընդունվել ՀՀ պատիժների և հարկադրանքի միջոցների կատարման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին որոշումը: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել է «ՀՀ-ում քրեակատարողական համակարգի բարեփոխման հեռանկարները: Պրոբացիոն ծառայության հիմնադրումը ՀՀ-ում» գնահատման հաշվետվությունը, որի վերաբերյալ հայտնում եմ.

1. Պրոբացիոն ծառայության գործունեության հետ կապված հարցերը կարգավորվելու են «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծով:

Հարկ է նշել, որ գրության մեջ բարձրացված հարցերը չեն հանդիսանում անմիջականորեն ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի կարգավորման առարկայի շրջանակում գտնվող հարցեր (ինչը չի բացառում որոշ հոդվածներում պրոբացիոն ծառայությանը անդրադարձ կատարելու հնարավորությունը):

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում առկա են որոշ դրույթներ, որոնք անդրադարձ են կատարում իրավասու մարմնի (պրոբացիայի ծառայություն) կողմից այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու դեպքում իրականացվող գործառույթներին:

Բացի դրանից ՀՀ արդարադատության նախարարությունը նախաձեռնել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները, որի շրջանակում անդրադարձ է կատարվելու պատիժների կատարման հետ կապված հարցերի առավել մանրամասն իրավական կարգավորմանը:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին ծառայություն:

Միաժամանակ ներկայացված հայեցակարգով մանրամասն ներկայացվում են պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող գործառույթները, իսկ ՀՀ քրեակատարողական վարչության ծառայողների գործառույթների և դերերի բաշխման, դրանց խաչման կամ նույնականացման հարցերը չեն հանդիսանում հայեցակարգի կարգավորման առարկա:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայեցակարգում տրվում են կարգավորման ենթակա հարաբերությունների բնութագիրը և ապագա իրավական ակտի նպատակները, շարադրվում են հիմնական դրույթները, վերլուծվում են նախագծվող նորմերի կիրարկման ենթադրվող հետևանքները, կարող է ներկայացվել իրավական ակտի նախնական կառուցվածքը:

Գրության մեջ բարձրացված հարցերը հետագա իրավական կարգավորում (օրինակ տեղեկատվական բազայի գործարկման մեխանիզմ, պահվող տեղեկատվության բնույթ և այլն) կստանան գործող օրենսդրական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու միջոցով:

3. Հայեցակարգի համաձայն պրոբացիայի ծառայության ներդրման սկզբնական փուլում Հայաստանի Հանրապետության համար նպատակահարմար չէ սահմանել բուն պրոբացայի ծառայության ոլորտում աշխատանքային փորձի պահանջ: Վերը նշվածը, իհարկե, չի բացառում մասնագիտական աշխատանքային փորձին վերաբերող պարտադիր պահանջների նախատեսումը օրենսդրությամբ:

Պրոբացիայի ծառայության ստեղծման առաջին փուլում նպատակահարմար է հատուկ դասընթացներ (վերապատրաստումներ) անցկացնել պրոբացիայի ծառայության աշխատակիցների համար:

Նախատեսվում է 2015 թվականի առաջին կիսամյակում Եվրոպայի Խորհրդի «Աջակցություն Հայաստանում պրոբացիոն ծառայության ստեղծմանը» ծրագրի շրջանակներում կազմակերպել վերապատրաստողների վերապատրաստումներ, իրականացնել պիլոտային գործընթացներ:

Միաժամանակ հայտնում ենք, որ պրոբացիոն ծառայությանը բնորոշ գործառույթների իրականացման պրոցեսում շեշտը դրվելու է նաև սոցիոլոգիայի, հոգեբանության (ինչպես նաև իրավագիտության) ոլորտում համապատասխան մասնագիտացում ունեցող անձանց վրա:

4. Հայեցակարգով սահմանվում են պրոբացիոն ծառայության նպատակները, ինչպես նաև դրա խնդիրները: Սահմանված նպատակներն ու խնդիրները կրում են փոխկապակցված բնույթ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության հետապնդած նպատակների իրականացումը կարող է հանգեցնել դրա առջև դրված խնդիրների լուծմանը և ընդհակառակը խնդիրների լուծումը կարող է նպաստել նպատակների կենսագործմանը:

5. Պրոբացիոն ծառայողների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև վերջիններիս առաջադրվող պահանջների, որակների հետ կապված հարցերը մանրամասն իրավական կարգավորում են ստանալու «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսական ծրագրի շրջանակներում գործող առանձին կրիմինալոգիական ուղղվածության դիմորդ կարող են հանդիսանալ ինչպես իրավաբաններ, այնպես էլ հոգեբաններ և սոցիոլոգներ, և այս ծրագրի շրջանակներում արդեն անցկացվում են հատուկ դասընթացներ «Պրոբացիայի դերը հանցագործության կանխարգելման ուղղությամբ» վերտառությամբ:

Նման մոտեցումը ևս խոսում է ապագա պրոբացիոն ծառայողների ձևավորման, պրոբացիայի ոլորտում մասնագիտական գիտելիքներ ստանալու գործընթացի արդյունավետության մասին:

Հայեցակարգով նախատեսվում է նաև վերապատրաստումներ և դասընթացներ անցկացնել ապագա պրոբացիոն ծառայողների հետ, ինչը նույնպես ուղղված է գրության մեջ վկայակոչված խնդիրների լուծմանը:

6. Ինչ վերաբերում է այն հարցին, թե հասարակության լայն մասշտաբներին պարբերաբար պետք է լուսաբանել պրոբացիոն ծառայության և դրա առավելությունների մասին, ապա հարկ է նշել, որ ՀՀ արդարդատության նախարարությունը ձեռնարկել և ձեռնարկելու է բոլոր անհրաժեշտ քայերը այդ ուղղությամբ:

Բացի դրանից հայեցակարգը հասանելի է էլեկտրոնային տարբերակով ՀՀ արդարդատության նախարարության պաշտոնական կայքէջում ([www.moj.am](http://www.moj.am)), պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ հասարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք իրենց մասնակցությունն են ցուցաբերում այս գործընթացում:

7. Հարկ է նշել, որ խորհրդատվական զեկույցները չեն կարող կաշկանդել մինչդատական վարույթն իրականացնող մարմնին կամ դատարանին, քանի որ այդ զեկույցները կրելու են խորհրդատվական բնույթ, ինչպես նաև զեկույց տրամադրելու համար գլխավոր նախապայման է մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանի կողմից պրոբացիոն ծառայությանը դիմելը:

Պրոբացիոն ծառայությունը չի միջամտում որևէ մարմնի գործունեության իրականացմանը, այլ միայն ներկայացնում է խորհրդատվական զեկույց:

8. Հայեցակարգի վերջնական տարբերակում նախատեսվում է մեդիացիայի հնարավորությունը մինչդատական փուլում օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում:

9. Չի բացառվում նաև այլ իրավական ակտերում պրոբացիոն ծառայողների հետ կապված այս կամ այն հարցի կարգավորում նախատեսելու հնարավորությունը:


10. Հայեցակարգով նախատեսվում է պրոբացիոն ծառայության փուլային ներդրում: Ծառայության ստեղծումը և գործառույթների ներդրումը պետք է իրականացվի փուլային կարգով, որը կապահովագրի ծառայությանը հնարավոր խնդիրներից և դժվարություններից, ինչպես նաև կերաշխավորի ծառայության առջև դրված նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացումը:

Նկատի է առնվում նաև ծառայության ներդրման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների ծավալն ու բազմազանությունը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ

ոեսությունների անբավարարությունը (ծախսերի միաժամանակյա իրականացման դեպքում):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սկզբնական շրջանում պրոբացիայի ծառայությունը պետք է իրականացնի միայն պենիտենցիար և հետպենիտենցիար փուլում պրոբացիայի ծառայությանը բնորոշ գործառույթները, իսկ հետագայում, հաշվի առնելով մինչդատական և դատական փուլում վերջինիս գործառույթների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ նախադրյալների, պայմանների ապահովման հետ կապված խնդիրների լուծումը, պրոբացիայի ծառայությունը կիրականացնի նաև այդ փուլերին բնութագրական պրոբացիայի ծառայությանը բնորոշ գործառույթներ:

11. Հայեցակարգի վերջնական տարբերակում չի նախատեսվում էլեկտրոնային մոնիթորինգից օգտվողներից գումար բռնագանձելու դրույթը: Նշված հարաբերությունները նախատեսվում է կարգավորել <Պրոբացիայի մասին> ՀՀ օրենքով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝   
?????? ???????  
Feb 28 2015 12:01 PM

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատ.՝ Ա. Գալստյան  
ՀՀ ԱՆ կազմակերպական իրավական  
վարչություն  
հեռ.՝ 319-117



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Ե 40/7-335  
«18» 02 2015

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63  
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58  
Ֆաքս (374 10) 44-29-04

<<ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ  
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ՏԻԿԻՆ ՀԱՅՎՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հարությունյան,

Ի պատասխան Ձեր գրության ուղարկվում է <<Հայաստանի Հանրապետության քրեակադարողական համակարգի բարեփոխման հեռանկարները: Պրոբացիոն ծառայության հիմնադրումը Հայաստանի Հանրապետությունում>> գնահատման զեկույցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության նկատառումների ու առաջարկությունների մասին տեղեկանքը:

Առդիր՝ 3 թերթ՝

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ ՔԿՎ կազմ-վերլուծական,  
իրավական և միջազգային հարաբերությունների  
բաժնի պետ Մ.Չախարյան  
հեռ. 011 -440 871



**ՏԵՂԵԿԱԼՔ**  
**(Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ի գրության վերաբերյալ)**

ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնում ստացվել և ուսումնասիրվել է Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ի կողմից կազմված «ՀՀ-ում քրեակատարողական համակարգի բարեփոխման հեռանկարները: Պրոբացիոն ծառայության հիմնադրումը ՀՀ-ում» գնահատման հաշվետվությունը:

**Հաշվետվության «Օրենսդրական հիմքերի վերաբերյալ»** մասի առաջարկության մեջ նշված է, որ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում պետք է նախատեսել դրույթներ պրոբացիոն ծառայության իրականացման ընդհանուր չափանիշների վերաբերյալ՝ հղում տալով քրեակատարողական օրենսգրքին: Կարծում ենք, որ քրեական օրենսգրքում դրանք նախատեսելու կարիք չկա, քանի որ պարզ չէ, թե դրանք ինչ չափանիշներ են: Եթե խոսքը գնում է պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող նոր պատժատեսակներին կամ քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիաների մեջ դրանց ներառմանը, ապա առաջարկությունն ընդունելի է:

**Հաշվետվության «Պրոբացիոն ծառայության ինստիտուցիոնալ կառուցվածքը»** մասի առաջարկության մեջ նշվում է, որ ապագա պրոբացիոն ծառայության մեջ պետք է ներգրավվել ինչպես ԱՊԿ բաժնի փորձառու աշխատակիցներին, այնպես էլ նորավարտ սոցիալական աշխատողներին, սոցիոլոգներին և հոգեբաններին: Կարծում ենք, որ ներկայումս պրոբացիոն ծառայության համար առաջնային է հոգեբանների և սոցիալական աշխատողների հաստիքների և գործառույթների սահմանումը:

Նույն տեղում նշվում է, որ պետք է «հստակ տարանջատել նորաստեղծ մարմնի նախատեսվող գործողությունները պահպանվող ԱՊԿ բաժնի գործառույթներից՝ վերջիններիս ֆունցիաների իրականացման եղանակների, վայրի և առնչվող այլ գործոնների կոնկրետացմամբ»: Անհասկանալի է, թե ինչպես և ինչու է պահպանվելու ԱՊԿ բաժինը, եթե ստեղծվելիք պրոբացիոն ծառայությունն իր գործունեության չորս փուլերին զուգահեռ իրականացնելու է նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնելու պատիժը

պայմանականորեն չկիրառած, պատժից պայմանական վաղաժամկետ ազատված և պատիժը հետաձգված անձանց նկատմամբ:

**Հաշվետության «Հայեցակարգի նախատեսված նպատակները և խնդիրները»** մասի առաջարկությունը ճիշտ է ձևակերպված, առարկություններ չունենք:

**Հաշվետվության «Պրոբացիոն ծառայողի մասնագիտական որակների և կարողությունների վերաբերյալ»** մասում ճիշտ է նկատվել, որ կարճաժամկետ վերապատրաստումները չեն կարող մասնագետներին զինել անհրաժեշտ հմտություններով: Նույն մասի առաջարկության վերաբերյալ առարկություններ չունենք, բացառությամբ դրա վերջին բառերի՝ «յուրաքանչյուր գործի/հանցանգործի հետ տարված աշխատանքի ավարտին»: Յուրաքանչյուր գործի/հանցագործի հետ տարվող աշխատանքի ավարտից հետո հնարավոր չէ կազմակերպել վերապատրաստում, կարելի է անհրաժեշտության դեպքում ստանալ համապատասխան խորհրդատվություն:

**Հաշվետվության «Ստեղծվող ազգային տեղեկատվական համակարգի վերաբերյալ»** մասի առաջարկությունն ընդհանուր առմամբ ընդունելի է, բացառությամբ տեղեկատվական համակարգին այլ մարմինների հասանելիության առումով: Անհրաժեշտության դեպքում նրանց կտրամադրվի համապատասխան տեղեկատվություն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

**Հաշվետվության «Մինչդատական զեկույցների վերաբերյալ»** մասի առաջարկության մեջ նշվում է, որ մինչդատական զեկույցները պետք է լինեն պարտադիր, և դրանք պահանջելու իրավունք ունենա նաև դատախազը և պաշտպանության կողմը: Կարծում ենք, որ մինչդատական զեկույցի ոչ պարտադիր լինելը կարևոր է, քանի որ հակառակ դեպքում հնարավոր չի լինի բոլոր գործերով ներկայացնել օբյեկտիվ, բազմակողմանի զեկույց ժամանակի (72 ժամ), աշխատակիցների, տեխնիկական և տրանսպորտային միջոցների սղության պատճառով: Խափանման միջոց կալանավորումը կիրառելու, ինչպես նաև կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության հարցը դատարանը պետք է քննարկի ՀՀ քր. դատ. օր-ի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում: Դատարանին պետք է ներկայացնել ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկներ մեղադրյալից կողմից ՀՀ քր. դատ. օր-ի 135-րդ

հողվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները չկատարելու բարձր հավանականության վերաբերյալ, որը նշված զեկույցներով ամրագրված միայն անձի և նրա վարքագծի վերաբերյալ ներկայացվող բնութագրական տեղեկությունների համատեքստում անհնարին կլինի ապահովել: Միջազգային փորձը ցույց է տվել, որ ոչ մի երկրում պաշտպանն իրավասու չէ պրոբացիոն ծառայությունից մինչդատական զեկույց պահանջելու և դրանք պարտադիր չեն բոլոր գործերի համար:

**Հաշվետվության «Մեդիացիայի վերաբերյալ»** մասի առաջարկությունն ընդունելի է, սակայն պետք է նշել, որ մեդիացիայի կիրառումն ավելի արդյունավետ կլինի, եթե այն սկսվի մինչդատական փուլում և հնարավոր լինի շարունակել նաև դատական փուլում:

**Հաշվետվության «Պրոբացիոն ծառայողների ամենօրյա գործառույթներն ու դրանց օրենսդրական ամրագրումը»** մասի առաջարկության հետ համաձայն ենք, սակայն թվարկված իրավական ակտերի մեջ պետք է ներառել նաև քրեակատարողական օրենսգիրքը:

**Հաշվետվության «Պրոբացիոն ծառայության գործառույթները չորս փուլերում իրականացնելու վերաբերյալ»** մասն ընդունելի է այն առումով, որ հնարավոր չէ ներկա պայմաններում ՀՀ-ում միանգամից ներդնել պրոբացիոն ծառայության գործունեության բոլոր չորս փուլերը: Կարծում ենք, որ նպատակահարմար է ծառայության ներդնումը սկսել դատական և պենիտենցիար փուլերից: Կանալավորումն որպես խափանման միջոց ընտրելու համար զեկույցների պատրաստումն այս պայմաններում իրատեսական չէ, կապված ժամկետների, մարդկային և տեխնիկական ռեսուրսների հետ:

**Հաշվետվության «Էլեկտրոնային մոնիթորինգ»** մասի առաջարկությունն ընդունելի է: Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ հաշվետվության մեջ նշված ընդունելի առաջարկությունները բազմիցս անգամ հնչեցվել են ՀՀ ԱՆ ՔԿՎ ղեկավարության և ներկայացուցիչների կողմից:

ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային  
պատիժների կատարման բաժնի պետ,  
արդարադատության փոխգնդապետ  
16.02.2015թ.



Լ. Ավետիսյան



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)